ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

—

ԱԶԳԱՅԻՆ ՋՈՒՋԵՐ.—Ց. Ց. Պարոնեան։ Գ. տպագրութիւն Թիֆլիս. 1896 —Հրատ. Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան։—Գինն է 1 ռուբլի։

Մի գիրք։ որ յիրաւի ոչ երրորդ անգամ միայն, այլ և շատ անգամներ ցանկալի էր հրատարակած տեսնել։ Ազգային Ջոջերը մեր գրականութեան այն սակաւաթիւ արդիւնքներից է։ որոնք դեռ երկար ժամանակ չեն հնանայ. կգայ այն մի օր։ երբ նա այլևս իբրև գրականական գործ շատ չի կարդացուի։ բայց այն ժամանակ ևս կպահէ իւր նշանակութիւնը իբրև մի պատմական կարևոր վաւերագիր։ Կարելի է համարձակ ասել։ որ ոչ մի գրուածք մեր ժամանակակից ազգային կեանքի մասին այնպիսի պարզ և ճշգրիտ գաղափար չէ տալիս։ որպիսին մի յայտանի շրջանի վերաբերմամբ Ջոջերի մէջ ենք գտնում։ Ըստ երևութին այդ գիրքը պարապ ժամերին ծառայելու և ծիծաղ յառաջ բերելու համար է աշխարհ եկել. բայց կգժուարանայինք դնել նորա մեջ մի ուրիշը մեր նոր գրականութիւնից։ որ հաւասարուէր նորան իւր ներքին բարոյական լրջութեամբ։ Ինքը հեղինակը լաւ ճանաչելով ընթերցող հասարակութեան թոյլ կողմերը՝ Ցառաջաբանի մէջ հրաւիրում է չխարուել արտաքինով։ այլ իւր ընծայած պատկերների վերայ իբրև իսկական կենսագրութիւնների վերայ նայել։ Եւ նա տալիս է կենսագրութիւններ՝ բառի ընդարձակ նշանակութեամբ. այն։ որն արտայայտելու համար ուրիշը թերթեր ու հատորներ պէտք է գործ դնէր՝ Պարոնեանի հոգետես աչքն ու սուր գրիչը մի կամ մի քանի գծերով են արտայայտում. և այդ գծերն անջնջելի են մնում ընթերցողի յիշողութեան մէջ. Երանի՜ նոյնպիսի խոր տպաւորութիւն թողնէր ամենի վերայ նաև այն մաքուր զգացումը։ որով ոգևորուած է հեղինակի գրիչը։ Կարելի է նա շատ դէպքում սխալուել է։ կարելի է լաւ չէ ըմբռնել իւր ընտրած անձի բնաւորութեան այս կամ այն կողմը։ բայց մեր տպաւորութիւնն այն է։ որ նա ներկայացրել է ամէն ինչ իրօք այնպէս։ ինչպէս ինքը տեսել է՝ առանց աչառութեան։ առանց անաղնիւ միտումների։ Այդ բարոյական ճշդութեան մէջ է նորա նկարագրութեանց բուն արժէքը։ Նկարագրուած անձերի մեծագոյն մասը մեզ անծանօթ է. մենք նոցա վերայ միայն իբրև տիպերի։ իբրև որոշ՝ հասարակական կեանքի ներկայացուցիչների վերայ ենք նայում։ և իբրև տիպեր նոքա աննման են։ —Ներկայ հրատարակութեան մէջ՝ Հրատ. Ընկերութեան արած Բ. տպագրութեան բաղդատմամբ։ աւելի է հեղինակի պատկերը և Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը. բայց այս մասին (և առհասարակ) հրատարակիչներն աւելորդ են համարել ծանօթութիւն դնել։ եթէ կազմի վրայի (հեղինակի պատկերով) մակագրութիւնը չհաշուենք.

ՆԵՐՔԻՆԱՊԵՏ ԱՍԼԱՆԸ. — Ց. Բաբախանեան։ Թիֆլիս 1896։

Մի ըստ ամենայնի անպէտք գրուածք։

ՓՈՔՐԻԿ ԶՐՈՑՑՆԵՐ. — Կազմեց Գ. Բաբուբեանց։ Թիֆլիս։ 1896. Գինն է 10 կ.

Մի փոքրիկ ժողովածու։ որի մէջ պէտքական նիւթերի հետ անպէտքներն էլ կան։ առհասարակ խեղճ թարգմանական լեզուով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳՐԻ ԱՌԱՋԻԿԱՑ 1897 ՏԱՐՈՒԱՑ.

Բաժանորդագինն է

Ռուսաստանում 4 ր.

Արտասահմանում 5 ր.

Առաջիկայ 1897 թուականից կհրատարակուի Նոր-Նախիջևանում

„ԳՈՐԾ“

Գրական եւ պատմական վեցամսեայ հանդէս։ Երկու գրքի բաժանորդագինն է Ռուսաստանում 3 ռուբլի։ արտասահմանի համար 10 ֆրանկ։ Ուրաքանչիւր գիրքը առանձին կարժենայ 2 ռուբլի։ Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել՝ Нахичевань на Дону, въ редакцію сборника „ГОРЦЪ“. Իսկ արտասահմանից—Nakhitgevan sur le Don, Rédaction de la Revue „GORZ“.

Խմբագիր—Հրատարակիչ

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑ 1897 Թ·

ՎԵՀ· ԿԱԹՈՂԻԿՈՍԻ· Ս· ԷՋՄԻԱԾՆԻ· ԳԻՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ԵՒ
ԱՑԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ·

ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ 20 կոպ·

Ցանկացողները թող վաղօրօք դիմեն Տպարանի Վարչութեան: Խիստ պատասխանատուութեան կենթարկուեն այն գործակալները, որոնք նշանակած գնից աւելի գնով կվաճառեն:

ԳԵՐԱՊԱՏԻՒ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ՓՈԽԱՆՈՐԴԱՅ, ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻՑ, ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԳՈՐԾԱԿԱԼԱՅ·

Այսու Տպարանական ժողովս յայտ առնէ ի գիտութիւն, եթէ կէտ նպատակի եղեալ ի քարտք իմն վիճակ ածել զգործ «ԱՐԱՐԱՏ» ամսագրոյ, որոշեաց զատել զամենայն գրութիւնսն, որ ինչ վասն հրատարակման, խմբագրութեան եւ առաքման սորին, սկիզբն առնելով առանձին բաժնի «Մասն ԱՐԱՐԱՏ ամսագրոյ» անուամբ, յորոյ անուն եւ ուղղեսցին այսուհետեւ ամենայն յօդուածք, բացատրութիւնք եւ այլ պէս պէս գրութիւնք ըստ ամենայն մասանց գործոց ամսագրոյս:

Զայսմանէ հաղորդելով ի գիտութիւն՝ ժողովս յարգանօք խնդրէ տնօրինել զարժանն վասն ի կատար ածելոյ զհետագայ կարեւոր որոշմունս ժողովոյս՝

Նախ՝ զի ոչ սնագան, քան զ 15-ն դեկտեմբերի, ընկալեալ լիցին աստ ցուցակք բաժանորդաց ամսագրոյս վասն առաջիկայ 1897 ամի·

Երկրորդ՝ զբաժանորդագինս աշխարհական անձանց այժմէն իսկ ընկալեալ յղել այսր ընդ ցուցակին, իսկ ի քահանայից եւ յայլ սպասաւորաց Եկեղեցւոյ խստիւ պահանջել զնոյնն յետ աւուրց Ցօնից ծննդեան եւ Մկրտութեան Տեառն եւ զ 1-ն փետրուարի՝ ուղղել այսր·

Երրորդ՝ Ջանալ զի ամենայն ոք, որ կարէ առանձինն ստանալ զհամարն իւր եւ կանխաւ վճարեալ է զբաժանորդագինն, զառանձինն ընկալցի զայն, որոշակի նշանակելով զհասցէս այդպիսեաց·

Չորրորդ՝ ի կարեւոր ղէպս վասն յապաւելոյ զբանակ համարաց ամսագրոյս, անյապաղ ծանուցանել Ժողովոյս·

Հինգերորդ՝ յառաքելն այսր զբաժանորդագինսն որոշակի նշանակել՝ որոյ են թուականի եւ որպիսի անձանց·

Վեցերորդ՝ այսուհետեւ ի բաժանորդագնոց մի երբէք առաքել յանուն Սրբ· Սինոդի, որպէս եւ այժմ փութով ծանուցանել Ժողովոյս, եթէ երբ եւ վասն քանի՞ օրինակաց ներկայ 1896 ամի բաժանորդագինք ուղղեալ են յանուն Սրբ· Սինոդին·

Եօթներորդ՝ յընթացս միոյ ամսոյ ժողովել եւ լրացուցանել զբաժանորդագինս Արարատայ վասն ներկայ 1896 ամի:

ՆԱԽԱԳԱՀ ՏՊԱՐԱՆՈՒՆԻՆ ԺՈՂՈՎՈՅ՝ ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ